ներից՝ որ ահա ամենը շրջապատել են ինձ և մորմնջում են իմ անդառնալի ուղեւորութեան վերայ, և կեանքից՝ որ հոմարեա նոր կի ծանօթանում նորա հետ։

Ուրեմն, իմ ազգակից ազնիւ հայեր, իմ աչքիս լոյս ազգ, որքաղան դասք հոգեւորականաց, վեր ուղղենք մեր աղօթքը դէպի Աստուած, և խնդրենք նորանից՝ որ այս հանգուցեալ Աղեքսանդրի հոգին Ռեթզեհեմի անմեղ մանկիկներուն հոգւոց հետ դասաւորեսցէ և երկնքի արքայութեանը արժանացուսցէ, սորա տառապեալ մօրը տայ համբերութիւն, որ մոռանայ այս կսկիծը, որովհետեւ դեռ տարին չլրացած իւր քաղցր ամուսնոյ մահուանից յետոյ, որդուն եւս ահա ուղարկաւորում է դէպի նորան, այն տեղ նոքա պէտք է գտնեն իրանց համար մի հանգիստ օթեւան։

Վանորայ, Լամբրոնացւոց հետ խնդրենք սուրբ Հոգուց, որ միխիթարում է տրտմեալներին, իջանէ այն սիրոյ աղբիւրը սիրով սորա մօր վերայ և միխիթարէ նորան ինչպէս մի պանդուխտ՝ որ այս անցաւոր կեանքի մէջ նեղանում է այսպիսի կորուստներից։ Թող սորա պակասեալ օրերը Տէր Աստուած նորա միւս մնացած որդւոց կեանքի հետ աւելացնէ։

Այսպէս իմ սիրելի Աղեքսանդր, գնա՛ս բարեաւ, թող Աստուծոյ հրեշտակը ուղեկից լինի քո հոգւոյն դէպի պատրաստեալ աւետեաց երկիրը, ինչ տեղ ոչ ինչ ցաւ և նեղութիւն չես տեսնիլ. երեւի նորա համար այսպէս շուտ թողիր այս անցաւոր աշխարհը, որ գնաս յաւիտենականութիւն և ուրախութեան մէջ մնաս յաւիտեան։ Ինչ երանութիւն տամ ես քեզ, ես մի չնչին արարածս և մահկանացուս։ Բայց յոյս ունիմ որ Աստուած անշուշտ ներելու է քո երեխայական սխալանքը և դասաւորելու անմահ հրեշտակների դասումը, ուր որ միշտ երջանկութեան մէջ մնալու ես։ Ուրեմն իմ ազնիւ եղբայր, գնաս բարեաւ 'ի Տէր։

29 Մարտ, 1870։
Ի Բաղդատ Տէրէս։

Օրինաւորական Խաչատուրոս
Տէր Սարգիսեանց ուսուցչապետ
ի Նէրսէսեան ազգային
հոգեւոր դպրոց։

ԹՈՎՄԱՍՈՒ ԵՐԻՑՈՒ

ՏԱՂՊ

Թռչուն գեղեցիկ, էր շուտով թռաւ։
Միմիայն դու չունիս տեղ սիրոյ հետ ինձ։
Սիրամարգի նման յոյժ զարդարեցար,
Ցանկարծակի թռար, չխօսեցար հետ ինձ։
Ուրախ սիրաս տրտմեց, ինչպէս սիրաս գոյ,
Բլբուլի նման կարօտ եմ քեզ տեսնելոյ։
Դու ես կարմիր վարդ, ես զուարթն եմ քոյ,
Շուտով առ իս դարձ, զլուցիր հետ ինձ։՝

digitised by A.R.A.R.@

Մանուշակի նման աւետիք գարնան,
Եւ տեսօք գեղեցիկ ծաղիկ անուանեն.
Վարդագոյն երեսօք տիպ արեգակեան,
Ենքը կու գաս եւ ծագես քու արեւդ հետ ինձ։
Արի՛ արի, եկ իմ սիրուն սիրելի,
Դու ծաղիկ անթառամ և վարդ գովելի.
Շոշոլեալ փայլ փայլեալ բոլորդ երեւի,
Թող այսպիսի կենօք անցանիս հետ ինձ։
Միտաս դու կապեր ես սիրով քու սրտին,
Ես դարդով բըլբուլ եմ, դու նման վարդին.
Մի թողուր զիս կարօտ, ռահմ արա վարդ իմ,
Այդ հեռի ճանապարհէդ մօտ դու եկ հետ ինձ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիպրոսի Արժանապատիւ Առաջնորդ բարեշնորհ Ղուկաս վարդապետը ներկայ ամսոյս դարձաւ ի Ս. Աթոռս, ուսկէ հինգ տարիէ ի վեր բացակայ կը գտնուէր յիշեալ վիճակին մէջ Առաջնորդութեան պաշտօնը վարելով խիստ արժանաւորութիւն. և իւր տեղը իրր փոխանորդ և տեղապահ խրկուեցաւ Մաղաղացի Արժանապատիւ Վարդան վարդապետը։

—Այս օրերս ամենայտնաւոր դէպք մի պատահեցաւ տեղւոյս Լուսաւորչի դպրոցին մէջ, զոր առ ի խրատ և ի զգուշութիւն կը յիշենք հոս։ Նազարէթցի երիտասարդ մի լատին կրօնիւ, և քանի մի ժամանակէ ի վեր ի բողոքականութիւն դարձած, ուզելով ֆրանչիսկեանք կրկին շահել անոր հոգին և մարմնաւորապէս ապրուստ մի եւս հոգալ առ ի հաստատութեան իւր հայրենի կրօնին մէջ, դպրոցի մէջ արաբերէնի դասատու կը կարգեն առանց դիտելու թէ մանկավարժութեան և դասախօսութեան կարեւոր հրամանութիւնն ու յատկութիւնն ունի թէ ոչ։ Ինչ ժամանակին մէջ նա իւր խակութիւնը ցոյց տուաւ իւր մէկ բարբարոսական գործովը։ Աշակերտաց մէկը դիտուածով իւր գրքին վրայ մեքան թափելով սատանիկ կը բարկանայ և ուրբի մուճակովն այնպէս անգթութեամբ կը զարնէ խեղճ տղուն կուրծքին և կշտերուն որ անմիջապէս տղան կը մարի և տուն կը տանին զինքը։ Հօրեղբայրը զայն տես, նեղով և զայրանալով դասատուին բարբարոս վարմունքին, անմիջապէս դուրս կ'ելնէ և դժբաղդաբար նորա հանդիպելով շուկային մէջ, թշնամանելով վրան կը յարձակի և լաւ ծեծ մի կուտայ։ Իսկ խեղճ աշակերտը տասն օրի չափ հիւանդ պառկելով ամսոյս 24ին հոգին կ'աւանդէ ինը տարեկան հասակին մէջ ի մեծ կսկիծ իւր ծնողացը՝ որոնց մէկ հատիկն էր։

Ի՜ չիներ կատաղութեան կոզմէն քինութեան երթալով և հասատաւելով տղուն մահը կերած ծեծէն պատճառաց ըլլալը, անմիջապէս դասատուն բռնել տալով կը բանտարկէ, թէպէտ և լատինաց վանքը շատ ջանաց որ ազատէ զայն։

Թող իմանան դասախարակք և մանկավարժք և դգուշանան։

—Օգոստոսի ամսոյն Միսնի մէջ նոր Տիզնաց քինութեանց վրայօք տրուած տեղեկութիւնները անուսոյգ ըլլալով, պարտք կը համարիմք մեզ հետաւել՝ թուով անոնց ճիշտ տեղեկութիւնները տալ։

digitised by A.R.A.R.@